

Ա. ԲՈՅՍ

ԿԱՐՄԻՐ ԿՈԼԱՆԵ



891.710
P-84

ՊԵՏԶՐԱՏ

1935

ՅԵՐԵՎԱՆ

42



ԿԱՐՄԻՐ ԿՈՒԱՆԸ

Այն, ինչ վոր պատահեց մայիսի մեկին, սարքել էյին Տիտկոն, Վանչոն, Լիլիկը և Սաշկոն:

Գիտե՞ք ովքեր են նրանք — յերեք տղա և մեկ աղջիկ, բոլորն ել հասակակիցներ, 11 տարեկան, և ապրում են նրանք Բուլղարիայի Բատակի կոչված փոքրիկ գյուղում: Որացույցի թերթիկը ցույց եր տալիս ապրիլի 30-ը: Հետևյալ օրն սկսվում եր նոր ամիսը — մայիսը: Յերեկոյան զանգը ժողովի յեր կանչում դաշտերից վերադարձած գյուղացիներին:

— Տեսե՞ք հա, վաղը վոչինչ չլինի: Լսեցի՞ք, — վոչ մի հավաքույթ, վոչ մի յերթ և վոչ մի դրոշակ: Յեկեղեցու աստիճանների վրա կանգնած բեխավոր վոստիկանը՝ թափահարելով ցուցամատը և կուչ ածելով աջ աչքը, գոռում եր.

— Յեթե վաղը վորեիցե մեկի խոսքից դրո-

շակ կախված լինի, կբանտարկենք և կաքսորենք: Լսեցի՞ք, դեհ ցրվեք:

Վոստիկանի հրամանը լսեցին վոչ միայն մեծերը: Միտկոն, Վանչոն և Սաշկոն, շրջապարիսպի վրա նստած, աչք չեյին հեռացնում վոստիկանից:

— Խեղդվես դու, տանք:

Բոլոր յերեխաները վոստիկանին «տաքա» էյին անվանում. «տաքա» — յերեխաների համար ամենազգվելի խոսքն եր:

Միտկոն լավ ե ճանաչում տաքաներին: Յերեք տարեկան եր նա չայն ժամանակ և հիշում ե, թե ինչպես գիշերը դուռը թրխկթրխկացրին: Մայրն անկողնից ցատկեց դեպի դուռը և բացականչեց.

— Ո՞վ ե այդտեղ:

— Բացե՛ք, վոստիկանությունն ե:

— Հայր, կորանք մենք...

Մայրն ընկավ հայրիկի վզովը... և ահա այդ գիշերվանից Միտկոն զրկվեց հորից: Բատակիյում վո՞ր յերեխան եր սիրում տաքաներին — վոչ մեկը: Վերցնենք Լիլիկին. նրա հայրը ն ըկարար եր: Լիլիկի մեծ յեղբորն այնքան ծեծեցին, վոր քիչ մնաց մեռնի: Լիլիկի անկողնի վերեից կախված ե նրա լուսանկարը:

— Ո՞, դու իմ սիրելի յեղբայր, ինչո՞ւ այլևս չկաս:

Լիլիկը նույնպես լսել եր, թե ինչպես հայրը հայհոյում եր հարուստներին:

— Մենք ձեզ ցույց կտանք, մենք ձեզ հետ այնպես կվարվենք, ինչպես Խորհրդային Ռուսաստանում:

Լիլիկը լսել եր «Խորհրդային Ռուսաստան»
խոսքը, բայց վախենում եր հարցնել: Մի անգամ
նա փողոցում Միտկոյին հարցրեց.

— Ինչ ե նշանակում «Խորհրդային Ռուսաս-
տան»: Միտկոն վրա պրծավ բռունցք արած, նրա
բերանը փակեց և ասաց.

— Յեթե տաքան լսեր՝ հորդ բանը բուրդ եր:
Հենց վոր ժողովը վերջացավ, յերեխաները՝ մեկը
մյուսին առաջ տալով, վազեցին:

— Գիտե՞ք ինչ, — ասաց Սաշկոն, — գնանք
մեր բակը: Յերեխաները գնացին բարձրացան
խոտի դեզը և սկսեցին քչփչալ:

— Գիտե՞ք ինչ, տաքան վախեցավ: Նա վա-
խենում ե, վոր վաղը մեզ մոտ ել այնպես լինի,
ինչպես Խորհրդային Ռուսաստանում: Յերեկ
յես յեղբորիցս լսեցի, վոր վաղը հիանալի կլինի





Յերեխաները տանիքից քաշ տալով բերին կուլանին և սկսեցին նրա հետ խաղալ խոտի վրա:

Հանկարծ Միտկոն շտապով սկսեց պատմել, թե ինչ անցավ իր մտքով, յերբ տեսավ կուլանին:

ԿԱՐՄԻ ՓԵՏՈՒՐՆԵՐ

Յերեխաներից վոչ մեկը չգնաց քնելու: Լիլիկը վազեց տուն և բերեց հոր ներկերի փոքրիկ դուլը և վրձինը: Վանչոն բերեց մի հին շապիկ, և յերբ քառյակը հավաքվեց — շտապ անցան աշխատանքի:



այնտեղ: Ամբողջ ժողովուրդը, ասում ե նա, դուրս ե գալիս փողոց. փորքան դրոշակներ կան, և բոլորը կարմիր: Յերգում են բոլորը:

— Գիտե՞ք ինչ եր ասում յեղբայրս. — այնտեղ տղաները և աղջիկները կարմիր վզկապ են կապում. նրանք կոչվում են պիոներներ և ոգնում են աշխատավորներին:

— Ա՛խ, յեթե մենք ել պիոներներ լինեյինք, դուրս կանեյինք բոլոր տաբաներին....

Կուլ... կուլ... կուլ...

Այն տանը, վորտեղ ապրում եյին յերեխաները, տանիքի վրա ապրում եր արագիլ կուլանը: Յերեխաները նրան գտել եյին ճահճում. նրա վոտը ջարդված եր:

Այդ որվանից կուլանն այդտեղ եր ապրում:



Վանչոն բռնել
եր կուանին, Սաշ-
կոն վրձինը հա-
ճախ թաթախում
եր դույլի մեջ և
կամաց տանում-
բերում թռչունի
փետուրների վրա-
յով:

— Զգույշ յեղիր,
Սաշկո, — խնդրում
եր Վանչոն:

— Յես լավ գի-
տեմ, մի սովորեցնի:
Վոտները ներ-
կեց Միտկոն, իսկ
վիզը — Լիլիկը:
Ներկեցին շապիկը,
նրանից շինեցին

վզկապ և կապեցին թռչունի վզին:

— Հիմա դու արդեն իսկական պիոներ ես:
Յերեխաներն սկսեցին պարել, իսկ կուանը կտցում եր:

Մի բարկանա, այ, կուան,

Ուղիղ կանգնիր, ջան, կուան:

Բայց կուանը, ինչպես յերևում ե, բարկանում
եր, տեսնելով իրեն նոր և անսովոր փետուրներով:
Հուսաբացին եր: Յերեխաները ծածուկ գնացին
բակերի հետեվի կողմով. նրանք վախենում եյին,
վոր իրենց նկատեն: Բայց բոլորը դեռ քնած եյին:
Յերբեմն հաջում եյին շները:

— Դեհ, շուտ իջիր, — և յերբ Միտկոն իջավ
տանիքից, յերեխաներն ուրախ յետ վագեցին:

Պյուղի ծայրից աքաղաղներն սկսել եյին
կանչել:

— ԾճԼՂ-րճԼ-ղճԼ, — աքլորի պես կանչեց
Միտկոն:

— ԾճԼՂ-րճԼ-ղճԼ, — պատասխանեց նրան
Վանչոն. իսկ Վանչոյին — Սաշկոն:

— ԾճԼՂ-րճԼ-ղճԼ, — բարձր ծայնով կանչեց Լիլիկը:





ԿԵՆԴԱՆԻ ԴՐՈՇԱԿ

Շուտով արթնացավ ամբողջ գյուղը: Բոլորը զարմացած նայում էին այն տանը, վորտեղ ապրում եր վոստիկանը:

— Ո՛հ, ինչպես կկատաղի տաբան:


— Կարող ե նույնիսկ բարկությունից պայթել:

— Մեզ համար ել կարող ե վատ լինել, — ասում էին: բոլորը:

— Յեվ ով ե համարձակվել այդ աներ:

Բոլոր անցնողները, մոռանալով իրենց աշխատանքը, խմբերով կանգնում էին տան մոտ: Վոստիկանը տեսավ, վոր բոլորը կանգ են առնում իր բնակարանի մոտ և ցույց են տալիս դեպի վերև, ինքն ել դուրս թռավ սենյակից:





— Ինչպես եք համարձակվել չհնազանդվել:
Ասված ե՛ք յեղել՝ այսօր չհավաքվել:

Նայելով տանիքին, նա կարմրեց, բարկացավ և
կատաղաբար գոռաց.

— Կորցրեք անմիջապես, բոլորիդ ել կբան-
տարկեմ, անպիտաններ: Սպասեք դեռ: Նա բռնեց
առաջին պատահած գյուղացու թևից և ասաց.

— Ի՛նչ ես բերանդ բաց արել, գնա և իս-
կույն իջեցրու:

Գյուղացին դեռ տանիքը չբարձրացած,
կույանը, Թափահարելով թևերը, թռավ և նստեց

մի ուրիշ տան ծխնելույզի վրա: Վոստիկանը վա-
ղեց խրճիթի տիրոջ մոտ:

— Գնա և իսկույն իջեցրու այն անպիտանին:
Բայց յերբ վոստիկանը տանտիրոջ հետ դուրս յե-
կավ բակը — կույանն արդեն չկար: Գյուղի հա-
մարյա կեսը հավաքվել եր: Բոլորը ծիծաղում




եյին և ասում. «Այսոր արգելված է կարմիր
դրոշակներ կախել, այն ինչ ծածանվում է կեն-
դանի կարմիր դրոշակ»:

Յերեխաները չափազանց ուրախ եյին. աշ-
խատում եյին աննկատելի կերպով թռչունին քշել
մի տեղից մյուսը և գոռում եյին.

Քիշ, քիշ, քիշ, կուլան,

Բան չի ստանա են տաբան:

Կուլանը բարձրացել եր յեկեղեցու գմբեթը:
Վոստրիկանը տեսավ, վոր ժողովուրդը շատանում



ՀՀ Ազգային գրադարան



NL0387333

3509
41

ե, իսկ կուլանին գմբեթից իջեցնելն անկարելի յե,
վորովհետեւ յեկեղեցին խարխուլ եր, և վոր
վոչ վոր չեր համաձայնվի բարձրանալ: Վոստրի-
կանը վազեց տուն: Մի բանի բոպեյից վերա-
դարձավ և ատրճանակով նշան բռնեց.

Տը-ւը... Կրակոցի ձայնը տարածվեց գյու-
ղովը մեկ: Յերեխաները տապ արին, կուլանը
թափահարեց թևերը, թռավ, բայց իսկույն ընկավ:
Վզկապն ընկավ խաչի ծայրը և արագիւր մնաց
կախված: Ահա ձեզ ամբողջը: Միտկոն, Սաշկոն,
Վանչոն և Լիլիկը մնացին արոմսը կուլանի:

Այնուամենայնիվ մախի մեկին Բատակի
գյուղում կախված եր կարմիր դրոշակ:





ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկարներ՝ ՅԱ. ՈՐՈՒՆՍԿՈՒ
Թարգմ. Թ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Ա. ՀԱՅՐԵԱՆ
Տեխ. խմբագիր՝ Հ. ՏՆՐ-ԴԱՎԹԵԱՆ

Հանձնված է արտագրույթյան 10/X 35 թ. Ստորագրված է տպելու 1/XI — 35 թ.
Գլավիլիա № 159. Հրատարակչույթյուն № 3274 Տիրած 5000. Ստատֆորմատ Ա5 148x210.

Типография им. Стачки 1902 г. АЧКПТ Ростов на-Дону. Заказ № 4878